


Հնագոյն կ'ըսեմ, վասն զի պէտք է որ հնութիւնն ինքն ըրած ըլլայ այս զանազանութիւնը: Եզնկայ երիցուն գործը կորսուած է յապա ժամանակս. այնուհետեւ այս զանազանութիւնն ընկելու ուրիշ պատճառ չունէին: Եթէ ուրեմն միջնադարեան պատմիչք կը նոյնացնեն զՎատագոյլը՝ Բագրեւանդայ համանուն եպիսկոպոսին հետ, աւանդութեան գծած ձամբէն կ'երթան, աւանդութեան՝ որ կը համապատասխանէ նաեւ հնագոյն պատմիչաց տուած տեղեկութեանց բովանդակութեան, և իւր արդարացումը կը գտնէ Չատագոյլին գրուածոց մէջ: Թէպէտ և նոյն իսկ եկեղեցական—պատմական նմանութիւնն կը պահանջէ տեսնել Եզնկայ պէս մարդու մը մէջ՝ հոգեւոր նախնապետութեան բարձրագոյն աստիճանաւոր մը, սակայն և այնպէս չեն պակտիր նաեւ ըննադատական փաստեր, որք նմանութեան թեթեւ կամարները վեր կը բռնեն պատմական պատճառաբանութեան նեցուկներով: Եզնիկ՝ որ «Եզը ազանդոց» զիրքը գրեց 441—449ին, Կողբ զիւղէն էր, վաւերական և պատմական կերպով ապացուցուած եպիսկոպոս Բագրեւանդայ:

Թրգմ. Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ



Ս Ա Ր Գ Ի Ս Վ. Շ Ն Ո Ր Հ Ա Լ Ի

ՔՆՆԱԳԱՏՔ — ինչպէս որ գիտենք — մինչեւ ցարդ աւելի հետամուտ եղան ըննութեան կնթարիկը նախնեաց պատմական գրուածները, և գրեթէ դեռ ակնարկ մի չի տրուեցաւ այն մեկնողական գրուածոց վերայ, որոնք ընդարձակ տեղ մի կը գրաւեն հայկական գրականութեան մէջ, ըստ որում գրեթէ ամէն դարուց մէջ անպակաս եղած են այս գիտութեամբ զբաղողներ, որոց մէջ ոչ այնքան աննշան ոք կ'երեւի Սարգիս վ. Շնորհալի, թէ՛ ըստ որում իբրեւ մեկնիչ և աստուածաբան, և թէ իբրեւ հայկաբան, որով և կ'արժանանայ անշուշտ ընդարձակ ու-

սումնասիրութեան մի. սակայն — զայս ուրիշ պատեհ առթի մը թողլով — մեր նպատակն է առ այժմ հարեւանցի ակնարկ մի տալ իւր կենաց և իւր եօթն կաթողիկէ թղթոց մեկնութեան նիւթոց բովանդակութեան և մասնաւորապէս նորա աղբերաց վերայ:

Սարգիս վ. ազգատոհմն, ծննդավայրն և ի ծնողացն ընդունած նախնական դաստիարակութիւնն բոլորովին անձանթ է մեզ. նոյն իսկ իւր ծննդեան թուականը՝ որոշակի չեն յայտնեւր մեզ իւր ժամանակակից և հետագայ պատմիչք: Առաջին անգամ կը հանդիպինք Սարգսի ի Կարմիր վանս², իբրեւ աշակերտ Ստեփ. գիւնական վ. և աշակերտակից երկուց հարազատացն Գրիգորիսի և Ներսիսի Շնորհալոյ և Իգնատիոսի վ.: Որոշ չգիտցուիր, թէ ճրքան տարի մնացած է Սարգիս ի Կարմիր վանս, և թէ երբ քահանայ ձեռնադրուած. սակայն հաւանական է, թէ հինգ վեց տարուց չափ հոս կրօնական և ուսումնական դաստիարակութեան ներքեւ կրթուելէն յետոյ, Բարսեղ կաթողիկոսն՝ զԳրիգորիս 15—16 տարուան քահանայ ձեռնադրած միջոց (1110—1) անտարակոյս մտոցած չէ նաեւ զՍարգիս և զԻգնատիոս մասնակցել այն սուրբ օժովութեան, մանաւանդ որ իրենց 16—20 ամեայ հասակն եւս կը ներեր

1. Հաւանօրէն զՍարգիս ծնած պէտք է համարինք 1090—8 տարիներու շրջանին մէջ. վասն զի սա աշակերտակից էր Գրիգորիսի Պահլաւունոյ՝ որ ծնած է 1093ին, ըստ որում 18 տարեկան կաթողիկոս կը նստի 1113ին, և վանք մտած տասնամեայ, հազիւ երեքամեայ իւր Ներսէս եղբօրը հետ. որոց այս փոքրիկ հասակաւ վանական լինելուն պատճառն այն է, որ իրենց խնամակալն մեծ վկայասէր մեռնելով՝ նորա յանձնարարութեամբ յաջորդն Բարսեղ զիրենք վանք դրաւ կրթուելու համար, որք և յետոյ ընկերացան Սարգսի և Իգնատիոսի հետ: Արդ, չենք կրնար ըսել, թէ և Սարգիս և Իգնատիոս այդքան տհաս հասակի մէջ վանք մտած ըլլան, այլ աւելի մեծ, որով գէթ հինգ տարի մեծ կը լինին քան զԳրիգորիոս: Եւ ահա այս հաշուով Սարգսի ծննդեան թուականը կրնանք դնել 1090—8 տարիներու շրջանաց մէջ:

2. Քեսուէի մօտ, Իշխանանիստն Գող Վալիս: